# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 սեպտեմբերի 2019 թվականի N 39-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի «Կոփոյ վար» կոչվող տարածքի շուրջ 1.7 կմ երկարությամբ ոռոգման, կենցաղային, խմելու և ջրարբիացման ջրագծի կառուցման համար նախատեսվող գումարը 2020 թվականի համայնքի բյուջեում նախատեսելու մասին.
   3) Դրամական օգնություն տալու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՔԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5-ը սեպտեմբերի 2019 թվականի N 40-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2019 թվականի ֆոնդային բյուջեի 4.2.4.57 գործառնական դասակարգման (ոռոգում) 5112 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածից (շենքերի և շինությունների կառուցում) պակասեցնել (կրճատել) 542.0 հազար դրամ, համայնքի ֆոնդային բյուջեի 9.1.1.51 գործառնական դասակարգման (նախադպրոցական կրթություն) 5113 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածից (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) պակասեցնել (կրճատել) 458.0 հազար դրամ, ընդամենը 1000.0 հազար դրամ, այն ավելացնել համայնքի ֆոնդային բյուջեի 1.6.1.51 գործառնական դասակարգման (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) 5134 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածին (նախագծահետազոտական ծախսեր)՝ «Կոփոյ վար» կոչվող տարածքում ջրագծի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2019 թվականի վարչական բյուջեի 4.2.1.55 գործառնական դասակարգման (գյուղատնտեսություն) 4657 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածից (այլ կապիտալ դրամաշնորհներ) պակասեցնել (կրճատել) 900.0 հազար դրամ, ***այն ավելացնել՝***

   2.1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի վարչական բյուջեի 1.6.1.51 գործառնական դասակարգման (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) 4267 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածին (կենցաղային և հանրային սննդի նյութեր)՝ 500.0 հազար դրամ՝ զորավարժության ժամանակ զորավարժության մասնակիցներին սնունդով ապահովելու նպատակով:

2.2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի վարչական բյուջեի 11.1.2.51 գործառնական դասակարգման (համայնքի պահուստային ֆոնդ) 4729 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածին (այլ նպաստներ բյուջեից)՝ 400.0 հազար դրամ՝ համայնքի կարիքավոր բնակիչներին օգնություն ցուցաբերելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՁԱՔԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5-ը սեպտեմբերի 2019 թվականի N 41-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՈՓՈՅ ՎԱՐ» ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՇՈՒՐՋ 1.7 ԿՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՈՌՈԳՄԱՆ, ԿԵՆՑԱՂԱՅԻՆ, ԽՄԵԼՈՒ ԵՎ ՋՐԱՐԲԻԱՑՄԱՆ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքն ընդգրկված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության զարգացման հիմնադրամիկողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրում, որով իրականացվում է համայնքի արոտավայրերի ջրարբիացում և աշխատանքներն արդեն ընթացքի մեջ են, ինչպես նաև հիմք ընդունելով Վաղաշեն համայնքի ավագանու 2017թվականի հունիսի 12-ի N13-Ա որոշումը, որի համաձայն անհրաժեշտություն է առաջանում գլխամասում ավելացնել ջրի քանակը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի արոտավայրերի ջրարբիացման ծրագրով կառուցվող ջրագծի գլխամասում ջրի քանակն ավելացնելու նպատակով շուրջ 1.7 կմ երկարությամբ ջրագծի կառուցման համար անհրաժեշտ 28491.47 հազար դրամ գումարը (համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի) նախատեսել 2020 թվականի համայնքի բյուջեում և վճարել 2020 թվականին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՔԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5-ը սեպտեմբերի 2019 թվականի N 42-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Վաղաշեն համայնքի բնակիչներ Վարդան Նիկոլայի Գասպարյանի, Լյուդմիլա Արմենակի Մխիթարյանի, Ամալիկ Հովհաննեսի Շմավոնյանի, Մանուշակ Արտուշի Հովհաննիսյանի, Զարուհի Լևոնիկի Խաչատրյանի դիմումները, համայնքի ավագանու սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի 28.08.2019 թվականի թիվ 4 արձանագրությունը, «Արտիսիմո» մշակութային ՀԿ նախագահ Էկա Հորստկայի գրությունը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Աշոտ Ալեքսանյանի 05.09.2019 թ.-ի N214 զեկուցագիրը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2019 թվականի բյուջեից համայնքի ներքոհիշյալ բնակիչներին հատկացնել դրամական օգնություն հետևյալ չափով՝

   1) Գասպարյան Վարդան Նիկոլայի - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ

   2) Մխիթարյան Լյուդմիլա Արմենակի - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ

   3) Շմավոնյան Ամալիկ Հովհաննեսի - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ

   5) Գորքոյան Ռոմիկ Շիրակի - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ

   4) Խաչատրյան Զարուհի Լևոնիկի - 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ

   5) Հովհաննիսյան Մանուշակ Արտուշի - 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ

   Ընդամենը՝ 220000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

2. Վերը նշված օգնության գումարը վճարել բյուջեի օգնության ֆոնդից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՋԱՔԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**